

### **Թեստավորման բողոքարկման կարգը**

1. Բողոքարկման առարկա կարող է լինել՝
  - ա) ստուգման անցկացման կարգի խախտումը,
  - բ) ստուգման արդյունքը, բացառությամբ հոգեբանական թեստավորման (անկեղծության և մասնագիտական պիտանելիության ստուգման) արդյունքների.
2. Բողոք-դիմումը շարադրվում է գրավոր:
3. Ստուգման անցկացման կարգի խախտման վերաբերյալ դիմումը դիմորդը կարող է ներկայացնել ստուգման օրը (ստուգման պահին կամ ավարտից հետո՝ մինչև ստուգման սենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու քարտուղարին:
4. Բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա պատասխանատու քարտուղարը կատարում է «ընդունված է» ընդունող հանձնաժողով ներկայացնելու համար նշումը և վերադարձնում դիմորդին:
5. Պատասխանատու քարտուղարը գրում է բացատրություն՝ այն կցելով բողոք-դիմումին և հանձնում հանձնաժողովի նախագահին:
6. Հանձնաժողովի նախագահը, ստանալով պատասխանատու քարտուղարի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը՝ ներկայացնում է ընդունող հանձնաժողով:
7. Ընդունող հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել:
8. Ընդունող հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը կայացվում է հոգուտ դիմորդի:
9. Բողոքը հիմնավոր համարելու դեպքում ընդունող հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու լրացուցիչ ստուգմանը:
10. Ընդունող հանձնաժողովը մերժում է բողոք-դիմումը՝
  - ա) դիմորդի կողմից իր մեղքով ստուգման հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,
  - բ) դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ:
11. Ընդունված որոշման մասին 24 ժամվա ընթացքում տեղյակ է պահվում դիմորդին:
12. Ստուգման արդյունքի վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն իրավունք ունի ներկայացնել ընդունող հանձնաժողովին գնահատականը հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում:
13. Ստուգման արդյունքի վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն անձամբ հանձնում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Հանձնաժողովի նախագահը

ստացված բողոք-դիմումները ընդունող հանձնաժողովին է հանձնում բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում:

14. Բողոք-դիմումի քննարկման արդյունքում ընդունող հանձնաժողովը որոշում է ընդունում ստուգման արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին:

15. Ընդունող հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա ստուգումների բողոքարկման արդյունքները դիմորդին հայտնվում են որոշումն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: